Առողջապահության
Նախարարություն
Ministry of Health
of the Republic of Armenia

ԱԱԻ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՌԵԳԻՍՏՐ

ԱԴՄԻՆԻՍՏՐԱՏՈՐՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՏԱՐԲԵՐԱԿ 1

ԵՐԵՎԱՆ
2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Բուժաշխատողների ռեգիստրի դերերի ադմինիստրատոր 2
2. Բուժաշխատողների ռեգիստրի ադմինիստրատոր 4
3. Բուժաշխատողների ռեգիստրի հաստատումների ադմինիստրատոր 7
4. Կրթական հաստատությունների ռեգիստր 10
5. ՇՄԶ կրեդիտավորված միջոցառումների ադմինիստրատոր 13
6. Բժիշկ-մասնագետների կառավարում 16
7. ՇՄԶ կրեդիտավորված միջոցառումների կառավարում 18
8. Նորություններ և ծանուցումներ 20
9. Բուժաշխատողների ռեգիստրի հաշվետվություններ 21
10. Ռեգիստրի բառարանների ադմինիստրատոր 25



Բաժինը նախատեսված է առողջապահության մասնագետների ռեգիստրի համապատասխան օգտվողների համար համապատասխան լիազորությունների տրամադրման համար:



Նախատեսված դերերն են.

1. **Դերերի ադմինիստրատոր**
2. **Վիճակագրական բլոկի ադմինիստրատոր**
3. **Ռեգիստրների ադմինիստրատոր**
4. **Ռեգիստրի հաստատումների ադմինիստրատոր**
5. **Կրթական հաստատությունների ադմինիստրատոր**
6. **ՇՄԶ կրեդիտավորված միջոցառումների ադմինիստրատոր**
7. **Կազմակերպության ադմինիստրատոր**

«Պատմություն» դաշտում երևում են կատարված փոփոխությունները: Փոփոխությունները տեսնելու համար հարկավոր է սեղմել **«Պատմություն»** դաշտի սլաքի վրա և բացված թափվող ցանկում կցուցադրվի ընթացիկ տարբերակը և նախորդ փոփոխությունները, օրը, ժամը:

Լիազորություններ ունեցողների ցանկը տեսնելու համար հարկավոր է սեղմել համապատասխան դերի անվան վրա:



Յուրաքանչյուր օգտատիրոջ լիազորություններն այստեղ հնարավոր է խմբագրել կամ, անհրաժեշտության դեպքում, հեռացնել համապատասխան կոճակների միջոցով: Հեռացնելու կոճակը սեղմելու դեպքում համակարգը տալիս է զգուշացնող հաղորդագրություն.



Նոր ադմինիստրատոր ավելացնում են **«+Ավելացնել»** կոճակի միջոցով: **«Անձ»** պատուհանում **«Սոցիալական քարտ»** ՀԾՀ դաշտը լրացնելով Բնակչության պետական ռեգիստրից (այսուհետ՝ ԲՊՌ) իրականացվում է որոնում ըստ անձի ՀԾՀ-ի և գտնվելու արդյունքում Որոնում կոճակը կանաչում է:



Սեղմելով Որոնում կոճակը, բացված պատուհանում հայտնվում են անձի տվյալները:

Գործողությունը հաստատվում է անձնական տվյալներով տողի վրա Ok կոճակը սեղմելու միջոցով, որի արդյունքում առկա դաշտերն ինքնաշխատ լրացվում են: Նոր օգտատիրոջ տվյալներն ավելանում են ցանկում: Ցանկացած գործողության վերջում, լինի դա նոր օգտատիրոջ տվյալների ավելացում կամ հեռացում, անհրաժեշտ է սեղմել էջի վերևի աջ անկյունում գտնվող **«Հիշել»** կոճակը:

Այն օգտատերը, ով այս բաժնում գործողություններ կատարելու լիազորություններ ունի, կարող է մուտքագրել, որոնել, խմբագրել և հեռացնել գրառումներ:



Այստեղ առկա է բուժաշխատողների ցանկ՝ անուն, ազգանուն, հայրանուն, սեռ, տարիք, մասնագիտացումներ, հավաստագրի տվյալներ, աշխատանքի վայր՝ առանձնացված սյունակներով, որոնման դաշտ, Ավելացնել և Մաքրել կոճակներ: Բուժաշխատողի վերաբերյալ գրառումը ստեղծելուց հետո այն հայտնվում է հետևյալ ցանկում:



Բուժաշխատողին ռեգիստրում հնարավոր է ավելացնել Ավելացնել կոճակի միջոցով: Բացված էջում պետք է լրացնել ՀԾՀ դաշտը և, եթե Որոնում կոճակը դառնում է կանաչ, նշանակում է, որ Ռեգիստրը ԲՊՌ-ից գտել է նշված ՀԾՀ-ով անձի տվյալները: Սեղմելով Որոնում կոճակի վրա, բացված պատուհանում կհայտնվեն որոնվող անձի տվյալները:





Անձնական տվյալներով տողը նշելուց և Ok կոճակի միջոցով հաստատելուց հետո ինքնաշխատ եղանակով լրացվում են համապատասխան դաշտերը՝ անուն, ազգանուն, հայրանուն, սեռ, ծննդյան ամսաթիվ, տարեթիվ, անձնագրի սերիա և համար:

«Էլ.փոստ», «Հեռախոսահամար», «Բջջ. հեռախոս» դաշտերը խմբագրելի են:



Էջում առկա բոլոր բաժինները լրացվում են նույն կարգով, ինչպես դա նկարագրված է **«Առողջապահության մասնագետի անձնական հաշիվ»** ուղեցույցում: Վերջում տվյալները պահպանելու համար հարկավոր է սեղմել Հիշել կոճակը:

Ռեգիստրում ավելացված բուժաշխատողին կարելի է գտնել որոնման դաշտի կամ որոնման ֆիլտրի միջոցով:

Որոնման ֆիլտրում նախատեսված են որոնման տարբեր չափանիշներ՝ անուն, ազգանուն, ծննդյան օր, ամսաթիվ, տարեթիվ, անձնագիր, հեռախոսահամար, էլ.հասցե, հավաստագրի տեսակ, համար, մասնագիտացում, տարբեր գրառումների կարգավիճակ և այլն: Որոնման համար պետք է ընտրել համապատասխան չափանիշները, այնուհետև սեղմել **«Փնտրել»** կոճակը, իսկ որոնման չափանիշները մաքրելու համար՝ **«Մաքրել»** կոճակը:



Ադմինիստրատորի դերը նախատեսված է բուժաշխատողների կողմից մուտքագրված, հաստատման անհրաժեշտություն ունեցող գրառումների հավաստիության ու ճշգրտության ստուգման և դրանց համապատասխան կարգավիճակ տալու համար:

Հաստատում պահանջող բաժիններն են.

1. **Կրթություն**
2. **Շարունակական մասնագիտական վարգացում**
3. **Հրապարակումներ**
4. **Աշխատանքային փորձ**
5. **Թղթային հավաստագրեր**
6. **Հավաստագրեր**
7. **Թեստավորման հայտ**



Նշված բոլոր տվյալները գտնվում են նախնական «Սպասում» կարգավիճակում և բաժինները՝ որոնցում դրանք լրացված են, ներկայացված են դեղին գույնով:

Պայմանավորված կարգավիճակով՝ բաժինների գույները կարող են փոխվել.

- Դեղին գույնը նշանակում է, որ գրառումը գտնվում է սպասման կարգավիճակում:
- Կարմիր գույն՝ գրառումն ունի մերժված կարգավիճակ:
- Կանաչ գույն՝ գրառումն ունի հաստատված կարգավիճակ:
- Մոխրագույն՝ գրառումն ունի սևագիր կարգավիճակ:

Վերոնշյալ բաժինների կարգավիճակները փոփոխվում են էջի վերին ձախ անկյունում գտնվող կոճակների միջոցով.

- Կրթություն

- Շարունակական մասնագիտական զարգացում

- Հրապարակումներ

- Աշխատանքային փորձ

- Հավաստագրեր

Բացված վիճակում բաժիններն ունեն հետևյալ տեսքը.

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ



ՇՄԶ



ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓՈՐՁ



ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁ

Հաստատելուց հետո մասնագիտական փորձի տարիներն արտացոլվում են դիտման ռեժիմում, բժշկի անձնական տվյալների բաժնում:

! **Եթե ներկայացված բաժիններից ցանկացածում բացակայում է կցված փաստաթուղթը, ապա համակարգը թույլ չի տա հաստատել այն:**

Բաժինը նախատեսված է բժշկական կրթական հաստատությունների մուտքագրման համար:



Ռեգիստրում կրթական հաստատությունները դասակարգված են անուններով: Յուրաքանչյուրը հնարավոր է խմբագրել կամ, անհրաժեշտության դեպքում, հեռացնել կոճակների միջոցով:



Նոր կրթական հաստատությունն ավելացվում է Ավելացնել կոճակի միջոցով: Տվյալների մուտքագրման ժամանակ պետք է լրացնել որոշ պարտադիր դաշտեր, առկա են նաև **«Ուսումնական հաստատության ադմինիստրատոր»** և **«Գտնվելու վայր»** բաժինները:



Ուսումնական հաստատության ադմինիստրատոր. այստեղ ադմինիստրատորին ավելացնելիս, նրան հասանելի է դառում **«Բժիշկ-մասնագետների կառավարում»** պատուհանը, որտեղ արդեն մուտքագրվում են տվյալ կրթական հաստատությունն ավարտած կամ ուսման մեջ գտնվող անձանց տվյալները:



Ադմինիստրատորը տվյալ պատուհանում կարող է աշխատել, երբ համակարգ է մուտք գործում իր մուտքային անունով և գաղտնաբառով:

Ադմինիստրատորին ավելացնում են **«+Ավելացնել»** կոճակի միջոցով: Բացված **«Անձ»** պատուհանում **«Սոցիալական քարտ»** դաշտը լրացնելիս աշխատում է ԲՊՈ-ում որոնման գործընթացը, որի արդյունքում Որոնում կոճակը կանաչում է:

Սեղմելով Որոնում կոճակը, բացված պատուհանում հայտնվում են անձի տվյալները:

Անձնական տվյալներով տողի վրա սեղմելուց հետո հարկավոր է հաստատել գործողությունը Ok կոճակի միջոցով: Արդյունքում՝ ինքնաշխատ լրացվում են առկա դաշտերը:

Տվյալները հնարավոր է խմբագրել կամ, անհրաժեշտության դեպքում, հեռացնել կոճակների միջոցով:



Գտնվելու վայր. այս բաժնում պետք է լրացնել կրթական հաստատության հասցեն: Բաժինը բացվում է **«+Ավելացնել»** կոճակի միջոցով:



Որոնման ֆիլտր. ավելացված հաստատության որոնումը կարող է իրականացվել մի քանի դաշտերի միջոցով.

- Անվանում
- Երկիր
- Ուսումնական հաստատության տեսակ
- Գիտական աստիճանների ծրագրեր

Որոնման տողի վրա գտվող ▼ կոճակը սեղմելուց հետո տվյալ դաշտերը դառնում են հասանելի:



Լրացված ֆիլտրի դաշտերը հնարավոր է միաժամանակ դատարկել «Մաքրել» կոճակի միջոցով:

Բաժինը նախատեսված է կրեդիտավորված միջոցառումների շտեմարանի ձևավորման համար. դասընթացներ, դասախոսություններ, կոնֆերանսներ, սեմինարներ և այլն:



Ռեգիստրում դասընթացների ցանկը դասակարգված է դասընթացի անվանումով, սկիզբ, ավարտ տվյալներով: Լիազորություն ունեցող օգտատերը կարող է խմբագրել կամ, անհրաժեշտության դեպքում, հեռացնել կոճակների միջոցով:

Նոր միջոցառումն ավելացնելու համար պետք է սեղմել **«+Ավելացնել»** կոճակը: Տվյալների մուտքագրման ժամանակ կան պարտադիր լրացման դաշտեր, որոնք լրացված չլինելու դեպքում շտեմարանում գրառումը հնարավոր չի լինի պահպանել: Սրանք ընդգծված են կարմիր գույնով: Առկա են նաև **«ՇՄԶ կրեդիտավորված միջոցառումների ֆայլեր»**, **«ՇՄԶ կրեդիտավորված միջոցառման վկայական»** և **«ՇՄԶ կրեդիտավորված միջոցառման ադմինիստրատոր»** բաժինները:





«ՇՄՋ տեսական կրեդիտ», **«ՇՄՋ գործնական կրեդիտ»**, **«ՇՄՋ ինքնակրթության կրեդիտ»** դաշտերը փոխկապակցված են՝ յուրաքանչյուրը պարտադիր է լրացման համար: Այդ դաշտերում լրացված միավորների գումարը երևում է **«ՇՄՋ կրեդիտներ»** անխմբագրելի դաշտում:
«Թիրախային լսարանը» ընտրվում է թափվող ցանկից, որը բացվում է սլաքի միջոցով:

Ցանկից հնարավոր է ընտրել մեկից ավելի տվյալ: Յուրաքանչյուր տվյալ ընտրելուց հետո հարկավոր է սեղմել «+Ավելացնել» կոճակը, որից հետո տվյալը կհայտնվի դաշտի ներքևի բաժնում: Ընտրված տվյալը չեղարկելու համար պետք է սեղմել տվյալի վերջում «Խաչ» նշանի վրա:

ՇՄՋ միջոցառման ադմինիստրատոր. այստեղ ադմինիստրատորին ավելացնելիս՝ նրան հասանելի է դառնում **«ՇՄՋ միջոցառման կառավարում»** պատուհանը, որտեղ արդեն մուտքագրում են տվյալ դասընթացների մասնակիցներին:





Ադմինիստրատորը տվյալ պատուհանում կարող է աշխատել, երբ համակարգ է մուտք գործում իր մուտքային անունով և գաղտնաբառով:

Ադմինիստրատորին ավելացնում են ⊕ կոճակի միջոցով: Բացված **«Անձ»** պատուհանում **«Սոցիալական քարտ»** դաշտը լրացնելիս՝ աշխատում է ԲՊՈ-ում որոնման գործընթացը, որի արդյունքում Որոնում կոճակը կանաչում է: Սեղմելով Որոնում կոճակը, բացված պատուհանում հայտնվում են անձի տվյալները:
Անձնական տվյալների տողի վրա սեղմելուց հետո հարկավոր է հաստատել գործողությունը Ok կոճակի միջոցով: Արդյունքում առկա դաշտերն ինքնաշխատ լրացվում են:
Տվյալները հնարավոր է խմբագրել կամ, անհրաժեշտության դեպքում, հեռացնել համապատասխան կոճակների միջոցով:

ՇՄԶ կրեդիտավորված միջոցառումների ֆայլեր (միջոցառման հայտ, ծրագիր, եզրակացություն, շահերի բախման հայտարարագիր, դասավանդողների ինքնակենսագրություն և այլն). այս բաժնում ավելացնում են կրեդիտավորված միջոցառման մասնակցությանը վերաբերվող փաստաթղթերը: Բաժինը բացվում է **«+Ավելացնել»** կոճակի միջոցով:



Բաժնում առկա են **«Փաստաթղթի ձևաչափ»**, **«Փաստաթղթի ծավալ»** անխմբագրելի դաշտերը, որոնք ինքնաշխատ լրացվում են տվյալները պահպանելուց հետո:

Կրեդիտավորված միջոցառման վկայական. այս բաժինը նախատեսված է դասընթացի ավարտական դիպլոմի կամ վկայականի կցման համար:

Որոնման ֆիլտր. ավելացված դասընթացի որոնումը կարող է իրականացվել մի քանի դաշտերի միջոցով: Որոնման տողի վրա գտվող ▼ կոճակը սեղմելուց հետո տվյալ դաշտերը դառնում են հասանելի:



Լրացված ֆիլտրի դաշտերը հնարավոր է միաժամանակ դատարկել «Մաքրել» կոճակի միջոցով:

Բաժինը նախատեսված է կրթական հաստատությունն ավարտած կամ ուսման մեջ գտնվող անձանց տվյալների մուտքագրման համար: Կրթական հաստատությունը պետք է գրանցված լինի «Կրթական հաստատությունների ռեգիստրում»:



ՀԾՀ	Անուն	Ազգանուն	Ծննդյան ամսաթիվ	Հայրանուն	Համար	Դիպլոմի տրման ամսաթիվ
AD1100000051	Լևոն	Գասպարյան	07/10/1992	Հայկ		
2307880445	ԱՆԴՐԱՆԻԿ	ՇԱՐԱԲՋՅԱՆ	13/07/1988	ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ		
6514980015	ԱՆԻ	ՍԻՄՈՆՅԱՆ	15/06/1998	ԿԱՐԵՆԻ	wqqwewe777	01/10/2023
7611940236	ԱՆԻ	ՆԵՐՍԻՍՅԱՆ	26/11/1994	ԹԵԼՄԱՆԻ	895855	05/09/2023
6203510440	ՀՆԱՁԱՆԴ	ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	12/03/1951	ԼԵՎՈՆԻ	1	01/07/2023
CUAH100000000001	Matilda	Willson	01/07/1990		2	01/07/2023
hsadmin	hsadmin	hsadmin	01/12/1979		855844545	05/06/2023
AE100000000005	Ruhi	Khayri Haddad	01/02/1984		78788	01/06/2023

Բաժնում երևում է հետևյալ տեղեկատվությունը.

- **ՀԾՀ**
- **Անուն**
- **Ազգանուն**
- **Հայրանուն**
- **Ծննդյան օր, ամսաթիվ, տարեթիվ**
- **Համար**
- **Հանձնաժողովի որոշման ամսաթիվ, տարեթիվ**
- **Կրթական աստիճան**

Նոր մասնագետ կարելի է ավելացնել «+Ավելացնել» կոճակի միջոցով: Անհրաժեշտ մուտքագրվող տվյալներն են.

- «Բժիշկ-մասնագետ» դաշտում մուտքագրվում է մասնակցի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան օրը, ամսաթիվը, տարեթիվը կամ ՀԾՀ-ն
- «Փաստաթուղթ» դաշտը լրացնելը պարտադիր է. նախատեսված է փաստաթղթերը կցելու համար
- «Փաստաթղթի անվանում». լրացնելը պարտադիր է
- «Դիպլոմի տրման ամսաթիվ». լրացնելը պարտադիր է

- «Փաստաթղթի տեսակ»
- «Համար» դաշտում լրացվում է դիպլոմի համարը
- «Կրթական աստիճան»
- «Թիրախային լսարան»
- «Որակավորում»



Բոլոր տվյալները ճիշտ մուտքագրելու դեպքում դրանք կպահպանվեն **«Հաստատել»** կոճակը սեղմելուց հետո: Համակարգը ստուգում է մուտքագրվող տվյալները **«Համար»**-ով, եթե համընկնում է գտնում, զգուշացնող հաղորդագրություն է տալիս:

Այս բաժնում բժիշկ-մասնագետին ավելացնելուց հետո կրթության վերաբերյալ տվյալներն արտացոլվում են նրա անձնական էջում՝ **«Կրթություն»** բաժնում: Բաժինը ներկայացվում է կանաչ գույնով, **«Հաստատված»** կարգավիճակով, ինչը նշանակում է, որ տվյալները մուտքագրվել են իրավասու անձի կողմից:

Եթե մասնագետը մուտքագրված չէ Առողջապահության մասնագետների ռեգիստրում, ապա **«Բժիշկ-մասնագետների կառավարում»** պատուհանում նրան ավելացնելիս՝ համակարգը տեղեկացնում է զգուշացնող հաղորդագրությամբ:

7. ՇՄՋ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Բաժինը նախատեսված է ՇՄՋ կրեդիտավորված միջոցառումների մասնակիցների տվյալների մուտքագրման համար: Միջոցառումները պետք է գրանցված լինեն «ՇՄՋ միջոցառումների ռեգիստրում»:



Բաժնում երևում է հետևյալ տեղեկատվությունը.

- **ՀԾՀ**
- **Անուն**
- **Ազգանուն**
- **Հայրանուն**
- **Ծննդյան օր, ամսաթիվ, տարեթիվ**
- **Սկիզբ**
- **Ավարտ**
- **Մասնագիտացում**

Նոր մասնակից կարելի է ավելացնել «+Ավելացնել» կոճակի միջոցով: Անհրաժեշտ մուտքագրվող տվյալներն են.

- «Բուժաշխատող» դաշտում մուտքագրվում է մասնակցի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան օրը, ամսաթիվը, տարեթիվը, ՀԾՀ-ն
- «Փաստաթուղթ» դաշտը նախատեսված է փաստաթղթերը կցելու համար
- «Մասնակցության տեսակ» դաշտը լրացվում է թափվող ցանկից՝ ընտրելով համապատասխան տեսակը
- «Սկիզբ», «Ավարտ» դաշտերում մուտքագրվում են մասնակցության սկիզբը և ավարտը
- «Մասնագիտացում» դաշտում մուտքագրվում է տվյալ մասնակցի մասնագիտացումը





Բոլոր տվյալները ճիշտ մուտքագրելու դեպքում դրանք կպահպանվեն **«Հաստատել»** կոճակը սեղմելուց հետո:

Այս բաժնում միջոցառման մասնակցին ավելացնելուց հետո միջոցառման վերաբերյալ տվյալներն արտացոլվում են մասնակցի անձնական էջում՝ «ՇՄԶ» բաժնում: Բաժինը ներկայացվում է դեղին գույնով, «Սպասում» կարգավիճակով, ինչը նշանակում է, որ տվյալները պետք է դիտարկվեն «Ռեգիստրի հաստատումների ադմինիստրատորի» կողմից:

Բաժինը նախատեսված է բուժաշխատողների համար՝ նորություններին և ծանուցումներին ծանոթանալու նպատակով:



Անհրաժեշտ նորություններ, տեղեկատվություն և ծանուցումներ կարելի է տեղադրել և ղեկավարել համապատասխան կոճակների միջոցով:



Նոր ծանուցում կարելի է տեղադրել «+Ավելացնել» կոճակի միջոցով: Դրա համար հարկավոր է լրացնել նշված դաշտերը.

- Վերնագիր
- Վերնագրի նկար
- Վերնագրի հղում
- Նկարագրություն
- Թերի գրառում
- Որակավորում
- Մասնագիտացում
- ՇՄՋ որակավորում
- ՇՄՋ մասնագիտացում

Ծանուցումը ուղարկելու համար հարկավոր է սեղմել «Հաստատել» կոճակը:

Բուժաշխատողը՝ մուտք կատարելով անձնական էջ և սեղմելով էջի վերևի աջ անկյունում գտնվող կոճակը, կարող է տեսնել իրեն հասանելի նորությունները և ծանուցումները:

Բաժինը նախատեսված է բուժաշխատողներին վերաբերվող տեղեկատվության մասին հաշվետվություն ստանալու համար: Օրինակ.

- ԱԱՊ օղակի բժիշկների հաստիքների և ֆիզիկական անձանց թվաքանակը հաշվետու տարվա վերջին՝ ըստ սեռի, տարիքի և պաշտոնի
- Միջին բուժանձնակազմի ֆիզիկական անձանց ընդհանուր թվաքանակից աշխատում են...
- Հիվանդանոցային օղակի միջին բուժանձնակազմ՝ ըստ մասնագիտության
- և այլն:



Բաժնում առկա են հետևյալ վիճակագրական ենթաբաժինները՝ համապատասխան վիճակագրական հաշվետվություններով.

1. Առողջապահական համակարգի մասնագետների վիճակագրություն
2. Բուժաշխատողների ռեգիստրի հաշվետվություններ
3. Մարդկային ներուժի բաշխում

Հաշվետվությունը կարելի է գեներացնել օգտագործելով հետևյալ դաշտերը.

- Տեսակ՝ ներկայացվում է թափվող ցանկով
- Տարի
- Մարզ
- Տեղակայում
- Բուժհաստատություն

Հաշվետվությունը ստանալու համար հարկավոր է սեղմել **«Գեներացնել հաշվետվություն»** կոճակի վրա:



Վիճակագրական բլոկում նախատեսված է բուժաշխատողների և նրանց վերաբերյալ տվյալները գրաֆիկական հաշվետվության տեսքով դիտարկելու հնարավորություն: Համակարգ մուտք գործելիս հասանելի են դառնում մի քանի հաշվետվության տեսակներով բաժիններ:


Բժիշկները ըստ մասնագիտությունների
Բժիշկները ըստ մասնագիտությունների և զբաղվածության
ՀԱՀ մարդկային ներուժ
ՀԱՀՄՆ՝ ԱԱՊ
ՀԱՀՄՆ՝ ընդհանուր քանակ
ՀԱՀՄՆ ըստ մասնագիտությունների և տարիքի
ՀԱՀՄՆ ըստ մասնագիտությունների, տարիքի և սեռի
ՀԱՀՄՆ ըստ մարզերի
ՀԱՀՄՆ ըստ մարզերի և բուժօգնութ. տեսակի


ՀԱՀ մարդկային ներուժ
Ամսաթիվ
Մասնագիտ.
Որակավորում
Մարզ
Սեռ
Տարիք
Բուժօգն. տեսակ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՕԳԵՐԱՏՈՐ
ԱՐՄԵԴ
11,502
ՀԱՀՄՆ՝ ընդհանուր քանակ
11,502
ՀԱՀՄՆ՝ ֆիլտրված
1,219
«Արմեդում» չգրանցված ՀԱՀՄՆ ընդհանուր քանակ
2,491
ՀԱՀՄՆ՝ ԱԱՊ
9,000
ՀԱՀՄՆ՝ հիվանդանոցային
2,768
ՀԱՀՄՆ ԱԱՊ՝ ներառյալ համատեղությամբ
9,275
ՀԱՀՄՆ հիվանդանոցային՝ ներառյալ համատեղությամբ
ՀԱՀՄՆ ըստ մարզերի
ԵՐԵՎԱՆ
ԾԻՐԱԿ
ԿՈՏԱՅՔ
ԱՐԱՐԱՏ
ԼՈՌԻ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻ...
ԱՐՄԱՎԻՐ
ԱՐԱԳԱԾՈՏՆ
ՍՅՈՒՆԻՔ
ՏԱՎՈՒՇ
Նշված չէ
ՎԱՅՈՑ ՁՈՐ
11,502
TOTAL
59.31%
ՀԱՀՄՆ ըստ մասնագիտությունների
ՀԱՀՄՆ ըստ մարզերի և բուժօգն. տեսակի
ԱԱՊ
Հիվանդանոցային
Դեղատուն
4,000





ՀԱՀՄՆ ըստ մասնագիտության և զբաղվածության

Մասնագիտություն	Աշխատում է	Չի աշխատում	Ընդամենը
-	11,494	550	12,044
Աշխատորոգիա և իմունոլոգիա	7	-	7
Պեդիատրական անեստոզիա և կլինիկական մոր‌ֆոլոգիա	20	3	23
Պեդիատրական ֆիզիոլոգիա	-	-	0
Ամբուլատորիա	130	5	135
Արնաստամոքսաբանություն	55	3	58
Անոթին կապված‌ության բժշկություն	-	-	0
Պրոկտոլոգիա	1	-	1
Անալոգիա	-	-	0
Անեսթեզիոլոգիա և ինտենսիվ թերապիա	200	9	209
Անոթային վիրաբուժություն	26	3	29
Անոթակապարալիզիաբուժություն	-	-	0

ՀԱՀՄՆ ըստ մասնագիտության և տարիքային խմբերի

Մասնագիտություն	<= 30	31 - 45	46 - 60	> 60	Ընդամենը
-	641	3,708	4,889	2,256	11,494
Աշխատորոգիա և իմունոլոգիա	-	1	3	3	7
Պեդիատրական անեստոզիա և կլինիկական մոր‌ֆոլոգիա	-	1	12	7	20
Պեդիատրական ֆիզիոլոգիա	-	-	-	-	0
Ամբուլատորիա	5	56	41	28	130
Արնաստամոքսաբանություն	10	24	12	9	55
Անոթին կապված‌ության բժշկություն	-	-	-	-	0
Պրոկտոլոգիա	-	1	-	-	1
Անալոգիա	-	-	-	-	0
Անեսթեզիոլոգիա և ինտենսիվ թերապիա	8	55	81	56	200
Անոթային վիրաբուժություն	3	16	5	2	26
Անոթակապարալիզիաբուժություն	-	-	-	-	0

Ավիագիծն բժշկություն	-	-		0

Rows 1-15 of 201

Ավիագիծն բժշկություն	-	-	-	-

Rows 1-15 of 201

ՀԱՅՄՆ ըստ մասնագիտության և տարիքի

Մասնագիտություն	20 - 25	25 - 30	30 - 35	35 - 40	40 - 45	45 - 50	50 - 55	55 - 60	60 - 65	65 - 70	70 - 75	75 - 80	80 - 85	85 - 90	Ընդամենը
Աերոգոլոգիա և իմունոլոգիա	-	-	-	1	-	2	-	-	3	-	1	-	-	-	7
Անասնաբանական սանատորիա և կլիմայական մոր֊ոլոգիա	-	-	-	-	1	5	4	2	2	2	2	1	1	-	20
Ակնաբանություն	-	4	15	18	20	15	19	9	8	13	5	4	-	-	130
Աղեստամոքսաբանություն	-	8	14	7	4	6	2	3	7	2	-	-	1	1	55
Անդրանիկություն	-	-	-	1	-	-	-	-	-	-	-	-	-	-	1
Մեսոթելիոլոգիա և ինտենսիվ թերապիա	-	2	29	16	11	25	32	24	22	24	11	4	-	-	200
Անոթային վիրաբուժություն	-	3	4	7	5	1	2	1	1	1	1	-	-	-	26
Առասնատոմիկ	-	-	-	1	-	1	-	-	-	-	-	-	-	-	2
Առասնատոմիմիկրոսկոպային գործ (առասնատոմիմիկ)	1	1	-	1	7	-	-	1	-	-	-	-	-	-	11
Արյունաբանություն, տրանսֆուզիոն բժշկություն և արյան պաշարում	-	1	1	4	2	3	1	-	1	4	2	-	-	-	19
Բժշկական ախտորոշիչ ճառագայթաբանություն	-	13	37	29	32	32	35	21	12	12	2	1	-	-	226
Բժշկական թունաբանություն	-	-	-	-	1	-	-	-	-	-	-	1	-	-	2
Բուժական	-	-	1	3	3	37	67	86	75	18	9	5	-	-	304
Բուժական գործ	-	-	1	-	-	1	-	1	2	1	3	1	-	-	10
Բուժական ախտորոշիչ գործի բժիշկ	-	-	-	-	-	-	1	2	6	3	-	-	-	-	12

Rows 1-15 of 101

ՀԱՅՄՆ ըստ մասնագիտության, տարիքի և սեռի

Մասնագիտություն	Տարիք	Քանակ՝ արական	Քանակ՝ իգական
-	-	1,374	10,128

Նոր մասնագետներ ըստ տարիների

Մասնագիտություն	2016	2017	2018	2019	2020	2021	2022	2023
Աերոգոլոգիա և իմունոլոգիա	1	-	-	-	-	1	1	-

ՀԱՅՄՆ ըստ մասնագիտության, տարիքի և սեռի

Մասնագիտություն	Տարիք	Քանակ՝ արական	Քանակ՝ իգական
-	-	1,374	10,128
Աերոգոլոգիա և իմունոլոգիա	-	1	6
Աերոգոլոգիա և իմունոլոգիա	35 - 40	0	1
Աերոգոլոգիա և իմունոլոգիա	45 - 50	0	2
Աերոգոլոգիա և իմունոլոգիա	60 - 65	1	2
Աերոգոլոգիա և իմունոլոգիա	70 - 75	0	1
Անասնաբանական սանատորիա և կլիմայական մոր֊ոլոգիա	-	5	15
Անասնաբանական սանատորիա և կլիմայական մոր֊ոլոգիա	40 - 45	1	0
Անասնաբանական սանատորիա և կլիմայական մոր֊ոլոգիա	45 - 50	1	4
Անասնաբանական սանատորիա և կլիմայական մոր֊ոլոգիա	50 - 55	2	2
Անասնաբանական սանատորիա և կլիմայական մոր֊ոլոգիա	55 - 60	0	2
Անասնաբանական սանատորիա և կլիմայական մոր֊ոլոգիա	60 - 65	0	2
Անասնաբանական սանատորիա և կլիմայական մոր֊ոլոգիա	65 - 70	1	1

Rows 1-13 of 780

Նոր մասնագետներ ըստ տարիների

Մասնագիտություն	2016	2017	2018	2019	2020	2021	2022	2023
Աերոգոլոգիա և իմունոլոգիա	1	-	-	-	-	1	1	-
Ակնաբանություն	3	4	9	10	8	5	19	20
Աղեստամոքսաբանություն	1	4	3	1	2	6	15	11
Անեսթեզիոլոգիա և ինտենսիվ թերապիա	8	6	12	14	24	24	40	19
Անոթային վիրաբուժություն	1	-	2	1	1	7	5	7
Առասնատոմիմիկրոսկոպային գործ (առասնատոմիմիկ)	1	1	3	3	-	6	1	-
Բժշկական ախտորոշիչ ճառագայթաբանություն	6	9	14	20	14	30	38	38
Բուժական	12	8	9	4	6	11	16	17
Դեղագործ	2	4	3	8	17	10	24	13
Դեղագործություն (դեղագործ)	6	3	4	12	9	15	13	14
Էնդոկրինոլոգիա	3	4	6	9	5	13	29	19
Ընդհանուր գործունեության բժիշկ	1	1	3	-	4	5	11	12
Ընդհանուր դեղագիտություն	3	2	5	12	8	9	21	11

Rows 1-13 of 100

Բաժինը նախատեսված է նոր բառարան-ների ստեղծման և կառավարման համար:

Բաժնում երևում է հետևյալ տեղեկատվությունը.

- Տեսակ
- Կարգավիճակ
- Անուն
- Ակտիվ է՝ սկսած...
- Խմբագրող



Անհրաժեշտ բառարանը խմբագրելու համար այն կարելի է որոնել կամ բառարանի անունով, կամ բառարանի արժեքով:

Սեղմելով որոնման արդյունքում գտած բառարանի վրա՝ կբացվի նոր էջ, որտեղ կարտացոլվեն տվյալ բառարանի արժեքները: Խմբագրման համար հարկավոր է սեղմել կոճակը, այնուհետև նշանը:



Փոփոխությունները պահպանելու համար հարկավոր է սեղմել կոճակը:

Գրանցվե՛ք **hrh.am**

Հարցերի դեպքում դիմեք՝ **medregister@nih.am**

էլ. հասցեին կամ կանգահարեք

043237134

Ուղեցույցը մշակվել է Ասիական Զարգացման Բանկի աջակցությամբ:
Տեսահոլովակը մշակվել է Ասիական Զարգացման Բանկի աջակցությամբ:
Սույն ուղեցույցում/տեսանյութում արտահայտված տեսակետները բացառապես հեղինակներինն են և կարող են չհամընկնել Ասիական Զարգացման Բանկի դիրքորոշումներին և տեսակետներին: